Բշի (20 Յ--Ն-) հանեցին ի զնտանէն։

ԻԳ-ին օր Եշի. Իե եւ Լ գող սպանեցին. եւ էր փոյթ այսմ բանիցս վէզիրն։ Եւ առաւօտուս (24 Յ--Ն-) Զ զալպազան ըմբռնեալ ի սահմանս Ղարամանին. գլուխն հոռմի երիցուքենէ դարձած տաճիկ մի և մի հայ՝ Ուստա Ջիլէկ կոչեցեալ և այլ Բ հայ և Բ տաճիկ բերեալ կախեցին յամենայն տեղիս ի տեսիլ ռամկաց քաղաքիս։

Կիրակի (26 Յ--Ն-). Մլքէ որդի Յակոբն կարգեցաւ եւ անդ զնացաք երեկոյիս։ Եւ օրս էր որ խաբաճն ելաւ։

Եւ Բշի (27 Յ--Ն-) երեկոյիս Տէր Գասպարի որդւոյ հարսնիքն զնացաք ի Խասքոյն, և Գշի (28 Յ--Ն-) եկաք։

Յուլիս ամիս օր Ուրբաթ։

ԺԳ-ին Դշի օր զտէզկեահտարն փոխեցին փռանն, որ Կարապետն էր եւ եդին ի տեղի Նորա զԿիրակոսն։

Եւ Եշիս (14 Յ--Ն-) մարախ բազում էլ եւ անց գնաց ընդ հարաւ ի վերայ ծովուն։

Ի սմին աւուր ի քաղաքն Եւդոկիա Բ եկեղեցի են քակեր Տաճիկքն Նէֆիրամ արարեալ, քանզի յոյժ հռչակաւորք էին լեալ և մօտ Տաճկացն, և ասեն թէ Քակեցէք ի գլխոյն փոքր ինչ ցածուցանել, եւ այնպէս առնեն։ Եւ ազգն Հայոց ասացեալ թէ Մեք այլ չեմք շիներ զդա, վասն է՞ր քակեցիք զդա. ահա կու երթամք ի թագաւորն գանկատ ի ձեռաց ձերոց։ Եւ զայս լըւեալ մուֆտուն՝ լցեալ բարկութեամբ Նէֆիրամ առնէ, այսինքն է՝ աշխարհաժողով Նոցա և զամենեսեան ժողովէ եւ դիմեալ ի վերայ եկեղեցեացն՝ զհիմն յերեւան հանեալ արեգակին։

ԺԷ-իս Կիրակի Վարդավառ։

Ի միւս Կիրակիս, որ էր ամսոյն ԻԴ, ի Սուրբ Նի-